ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի 2010թ. գիտական և գիտակազմակերպչական գործունեության հիմնական արդյունքների մասին

1. 2010թ. ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի գործունեության կարևորագույն արդյունքներից կարելի է առանձնացնել հետևյալը.

ա) Գումարվել է Շիրակի պատմամշակութային ժառանգությանը նվիրված 8-րդ միջազգային գիտաժողովը, որին մասնակցել են նաև 16 հայագետներ ՌԴ-ից, Վրաստանից, Ֆրանսիայից, Իտալիայից, Ճապոնիայից, Գերմանիայից: Հրատարակվել է Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու՝ 19.5 հրատ. մամուլ ծավալով:

բ) Հիմնադրվել և հրատարակվել է կենտրոնի «Շիրակի հնագիտական և պատմագրական ուսումնասիրություններ» մատենաշարի առաջին հատորը՝ 14.7 հրատ. մամուլ ծավալով, գունավոր ներդիրներով:

գ) Տպագրվել են ավ. գիտաշխատող Կ. Սահակյանի «Հազար երազի հուշարձան» էթնոհոգեբանական բնույթի և Հ. Հարությունյանի «Երաժշտությունը V-XVդարերի հայ մատենագրության մեջ» երաժշտագիտական աշխատությունները, ինչպես նաև Կենտրոնի «Գիտական աշխատություններ» հոդվածների ժողովածուի 13-րդ հատորը՝ 13 հրատ. մամուլ ծավալով:

դ) Ավարտվել և հանձնվել է տպագրության Ալեքսանդրապոլի գավառի XIXդ. երկրորդ կեսի ժողովրդագրության վերաբերյալ «Ալեքսանդրապոլի գավառի պատմությունը թվերով» փաստագրական նյութերի ժողովածուի առաջին հատորը՝ 18 հրատ. մամուլ ծավալով:

ե) Պեղումներով հայտնաբերվել են 4 նոր քարանձավներ Անիի հյուսիսային արվարձան հանդիսացող Հայկաձորի միջնադարյան քարանձավային բնակավայրում:

զ) Պեղումներով բացվել են նոր կառույցներ Մեծ Սեպասարի վաղբրոնզիդարյան տաճարական համալիրի հնավայրում:

2. 2010թ. բազային ֆինանսավորմամբ «Շիրակի հնագիտական և պատմազգագրական ուսումնասիրություններ» գիտական թեմայի շրջանակներում ՇՀՀ կենտրոնում իրականացված աշխատանքները կատարվել են երեք ուղղություններով՝ Շիրակի պատմագիտություն, հնագիտություն և բանագիտություն:

- Հաշվետու տարում մարզի հնագիտական ուսումնասիրության ուղղությամբ իրականացվել են հետևյալ աշխատանքները. Շարունակվել են Մեծ Սեպասարի վաղբրոնզիդարյան հնավայրի պեղումները, որոնք նպատակ էին հետապնդում ամբողջացնելու տաճարական համալիրի պատկերը: Պեղումներով հայտնաբերված նոր կառույցները և գտածոները կօգնեն լրացնելու նախորդ տարիներին այստեղից հայտնաբերված վաղբրոնզիդարյան ժամանակաշրջանի բնակչության նյութական և հոգևոր մշակույթին, ճարտարապետությանը, կենցաղին ու հավատալիքներին վերաբերող տվյալները:

Պեղումներ են իրականացվել նաև Անիի հյուսիսային արվարձան հանդիսացող Հայկաձորի միջնադարյան քարանձավային բնակավայրում: Պեղումներով հայտնաբերվել են արվարձանի բնակեցման առաջին փուլին վերաբերող նոր քարանձավներ: Պեղվել է նաև նույն տարածքում գտնվող ուշուրարտական ամրոց-բնակավայրը, որտեղ հայտնաբերվել են միջնապատով բաժանված երկու կառույցներ: Հստակեցվել են հուշարձանի շերտագրությունը, տարբեր շինարարական հորիզոնների հարաբերակցությունը և թվագրումը:

Միջազգային համագործակցության ոլորտում կենտրոնի հնագետների խումբը համագործակցել է Ժ. Պ. Մահեյի ղեկավարած Անիի արշավախմբի հետ՝ հնագիտական հետախուզություն և չափագրական աշխատանքներ իրականացնելով Երազգավորսի VII-XդդԹ. ամրոց-եկեղեցում:

Պեղումներով հայտնաբերված բոլոր նյութերը գտնվում են կամերալ մշակման փուլում, մարդաբանական նյութը հանձնվել է ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, իսկ ոսկրաբանական նյութը՝ ԳԱԱ կենդանաբանության ինստիտուտ: Խմբի աշխատանքները ներկայացվել են միջազգային (2) և հանրապետական (1) գիտաժողովներում, հրապարակվել են ինչպես արտասահմանում (1) այնպես էլ Հայաստանի գիտական հանդեսներում (2), հանձնվել են հրատարակման 2 հոդված:

- Բազային ֆինանսավորմամբ Կենտրոնում իրականացվող ծրագրի շրջանակներում շարունակվել են բանահավաքչական աշխատանքները Գյումրիում և մերձակա գյուղական բնակավայրերում՝ բանահյուսական փոքր ժանրի նոր նմուշների հայտնաբերման և գրառման նպատակով: Դրանց համեմատական քննության նպատակով ուսումնասիրվել են

ԳԱԱ ՀԱԻ բանահյուսության արխիվի Պ. Բարսեղյանի անձնական ֆոնդի համապատասխան նյութերը: Հստակեցվել են նոր գրառված նյութերի ժանրային համակարգը, ժողովրդական կենցաղին ու տոներին առնչվող հմայությունների և ծիսական սովորույթների մի շարք առանձնահատկություններ: Առանձնակի ուշադրություն է դարձվել այդ նմուշների լեզվառճական քննությանը, արտահայտչամիջոցների և պատկերավորման համակարգի բնութագրական կողմերին: Կազմվել են նոր բանասացների անվանական, սեռատարիքային, աշխարհագրական և ժամանակագրական ուղեցույցներ:

Մյուս կողմից կատարող խումբը շարունակում է Շիրակի մարզի ազգաբնակչության խոցելի շերտերի (ծերեր, հաշմանդամներ, մուրացիկներ, որբեր, միայնակ անձիք և այլն) հիմնախնդիրների, ընտանիքի վրա միգրացիայի ազդեցության ուսումնասիրությունը: Ծերերի հիմնախնդիրների հոգեբանական ընկալումը հեշտացնելու նպատակով կենտրոնում պարբերաբար կազմակերպվել են սեմինար քննարկումներ բուհերի ուսանողների հետ «Մենք էլ ենք ծերանալու» թեմայով:

Հաշվետու տարում էթնոհոգեբանների խումբը հրատարակել է 3 գիտական աշխատանքներ, հրատարակել «Հազար երազի հուշարձան» մենագրությունը՝ 19.5 հրատ. մամուլ ծավալով:

- Հաշվետու 2010թ. կենտրոնում շարունակվել է Շիրակի հնագույն շրջանի պատմության, մասնավորապես մ.թ.ա. առաջին հազարամյակում Ախուրյանի ավազանի և հարակից տարածքների ցեղային երկրների տեղադրության, նրանց քաղաքական պատմության, բնակչության հոգևոր, մշակութային և էթնիկ զարգացումների վերաբերյալ ուսումնասիրությունը: Դրանց արդյունքները ամփոփվել են ՇՊՄԺ 8-րդ միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուում տպագրված 3 գիտական հաղորդումներում, որտեղ հեղինակներն արծարծում են մի շարք դիցանունների հայկական (հնդեվրոպական) ծագման հարցը՝ հնարավորինս հստակեցնելու համար ավազանի երկրների ժողովրդների դիցաբանական պատկերացումների վերաբերյալ արդի գիտական մոտեցումները: Եվս երկու հոդվածներ ներկայացվել են տպագրության:

Շիրակի պատմության ուսումնասիրության շրջանակներում որոշակի աշխատանք է կատարվել նաև հարակից գավառների (մասնավորաբար՝ Վանանդի) հետ միջնադարյան Շիրակի փոխառնչությունների բացահայտման ուղղությամբ: Շիրակի այդ շրջանի պատմության վերաբերյալ զգալի փաստագրական նյութ է հավաքվել ինչպես Հայաստանի ազգային արխիվում, այնպես էլ Վրաստանի պատմության կենտրոնական արխիվում

պահվող բացառիկ կարևորություն ներկայացնող ֆոնդերից: Թեմայի շրջանակներում 2010թ. պաշտպանվել է մեկ թեկնածուական ատենախոսություն (Ա.Ակոպով):

3. ՇՀՀ կենտրոնում հաշվետու տարում իրականացվել են պետբյուջեից ֆինանսավորմամբ 3 թեմաներ: Դրանցից առաջինը «Շիրակի բանավոր ավանդույթի պրոֆեսիոնալ երաժշտությունը պատմաքննական լույսի տակ» թեման է (ղեկ. արվ.գ.թ. Հ. Հարությունյան), որի կատարող խումբը հաշվետու տարում մի կողմից շարունակել է «Ալեքսանդրապոլի աշուղական դպրոցը» աշխատության ամբողջացման համար աղբյուրագիտական նոր նյութերի հավաքումն ու մշակումը (Վ.Տալյանի, Ա.Քոչարյանի, Պ.Բաբայանի անձնական ֆոնդեր), մյուս կողմից՝ ձեռնարկել է նորօրյա աշուղների կյանքի ու ստեղծագործության համահավաք նյութերի հրատարակության նախապատրաստական աշխատանքները: Արվածը հնարավորություն կտա հստակեցնել Ալեքսանդրապոլյան և Լենինականյան աշուղական դպրոցների միջև ավանդութային փոխառնչության խնդիրները և դրանց զարգացման արդի միտումները: 2010թ.-ին կատարող խումբը կազմել է նաև Շահենի աշուղական դպրոցի մյուս ներկայացուցիչների՝ Դվալի Մուկուչի (Դվալ-Օղլի) և Դուշիկի երգարանները (ընդհանուր առմամբ 80 երգ և բանաստեղծություն): Մարզի մի շարք բնակավայրերում (Մեծ Սեպասար, Կրասար, Աշոցք, Աղին) կատարող խմբի կողմից հավաքվել, քարտագրվել և համակարգչային նոտագրման են ենթարկվել աշուղական և ժողովրդական երգերի շուրջ 50 նմուշներ:

Իրականացվող թեմայի շրջանակներում կատարող խումբը 2010թ.-ին հրատարակել է 3 գիտական հոդվածներ, մեկ մենագրություն, անցկացրել 2 երաժշտագիտական սեմինարներ, հանդես եկել թեմային առնչվող մի քանի դասախոսություններով կոնսեր-վատորիայի Գյումրու մասնաճյուղում, Շիրակի հոգևոր թեմի սոցիալ-կրթական կենտրոնում, ինչպես նաև Կարսի աշուղական երգի կենտրոնում:

▪ Թեմատիկ ֆինանսավորմամբ Կենտրոնում ավարտված երկրորդ ծրագիրը «Ալեքսանդ-րապոլի գավառը 19-րդ դարի վերջին քառորդին և 20-րդ դարասկզբին» թեման է (ղեկավար՝ պ.գ.թ.Ա.Հայրապետյան): Ավարտին է հասցվել Ալեքսանդրապոլի գավառի XX դարասկզբի ժողովրդագրական դրությանը վերաբերող արխիվային նյութի հավաքման և վերլուծության ուղղությամբ տարվող աշխատանքը: Դրան զուգահեռ կատարվել է 1900-1908թթ. ընթացքում, ինչպես նաև՝ Առաջին աշխարհամարտի տարիներին եղեռնից մազապուրծ եղած արևմտահայ գաղթականության՝ Ալեքսանդրապոլի գավառի տարածքում տեղաբաշխման ու ներգաղթից հետո գավառի ժողովրդագրական դրությանը վերաբերող

արխիվային նյութի հավաքչական աշխատանքը: Ավարտվել է «Ալեքսանդրապոլի գավառի պատմությունը թվերով» նյութերի և փաստաթղթերի ժողովածուի առաջին հատորի խմբագրումը և այն հանձնվել է տպագրության: Սկսվել է ժողովածուի 2-րդ հատորի նախապատրաստական աշխատանքը:

Թեմային զուգահեռ՝ խումբը 2010թ.-ին կատարել է նա¨ Ալեքսանդրապոլի գավառի XX դարասկզբի հասարակական-քաղաքական կյանքը լուսաբանող արխիվային-վիճակագրական տվյալների հավաքչական աշխատանքը: Նոր ուսումնասիրության նպատակն էր գոյություն ունեցող սկզբնաղբյուրների, գրականության և հատկատես արխիվային հարուստ նյութի օգտագործմամբ շարունակել գավառի ռազմաքաղաքական վիճակի և մասնավորապես՝ 1920-1921թթ. խորհրդային կարգերի հաստատման հիմնախնդիրների ուսումնասիրությունը: Այս ուղղությամբ հաշվետու տարում պաշտպանվել է թեկնածուական ատենախոսություն (Գ.Այվազյան): Կատարվում է նա¨ Ալեքսանդրապոլի գավառի մշակույթի, կրթական գործի, սոցիալ-տնտեսական իրավիճակի հանգամանալի ուսումնասիրություն, որը կշարունակվի նա¨ մոտակա երեք տարիներին:

Խումբը զգալի աշխատանք է կատարել Ալեքսանդրապոլի կերպարվեստի պատմության ուսումնասիրության ուղղությամբ (Ա.Բրուտյան, Շ.Սարգսյան, Յու. Վերժբիցկայա ¨ ուրիշներ): Ալեքսանդրապոլի գեղարվեստական կյանքի ուսումնասիրության վերաբերյալ նոր փաստերի հայտնաբերման նպատակով ուսումնասիրվել են Հայաստանի ազգային պատկերասրահի արխիվներում պահվող և քաղաքի XIXդ առաջին կեսի գեղարվեստական կյանքին վերաբերող բացառիկ կարևորություն ներկայացնող ֆոնդերը:

Հաշվետու տարում կատարող խումբը հրատարակել է 6 գիտական հոդվածներ, հաղորդումներով մասնակցել միջազգային ու հանրապետական 2 գիտաժողովների, «Գիտություն» հրատարակչությանը տպագրության հանձնել մեն ավարտուն աշխատանք՝ 18 հրատ. մամուլ ծավալով:

▪ «Գյումրի-Ալեքսանդրապոլ-Լենինական. առաջնային արտադրության և կենսապահովման մշակույթները» թեմայի (ղեկավար՝ պ.գ.թ. Կ.Բազեյան) կատարման վերջին տարում առաջադիր խնդիրներից ավարտվել են Ալեքսանդրապոլ-Լենինականի էթնիկ կազմի, հատկապես հայ-ռուսական փոխառնչությունների, բնակչության հիմնական զբաղմունքների, կենսապահովման մշակույթի առանձնահատկությունների, բնակարանի կահույքի, հագուստի, սննդի համակարգի և դրանցում կատարված փոփոխությունների ուսումնասիրությունը: Խմբի կողմից ժողովրդական արհեստների մասին ԳԱԱ ՀԱԻ արխիվում ձեռք

բերված արժեքավոր ձեռագիր նյութերը օգտագործվել են Ալեքսանդրապոլի արհեստների ամբողջական պատկերը ներկայացնելիս զուգահեռներ անելու, Հայաստանի տարբեր շրջանների հետ ընդհանրություններ ու տարբերություններ վեր հանելու համար:

Հաշվետու տարում խումբը թեմային հարակից՝ քննության է առել գործվածքի ու դրա հետ կապված արհեստների հարցը, որ մինչ օրս հայոց ավանդական մշակույթում ամբողջական ձևով ուսումնասիրված չէ՝ բացառությամբ գեղարվեստական գործվածքի, որն ավելի շուտ արվեստաբանական հետազոտության առարկա է դարձել, քան ազգագրական: Այս ուղղությամբ հրատարակության է պատրաստվել խմբի ղեկավար Կ. Բազեյանի “Շիրակի գործվածքը” մենագրությունը, որտեղ քննվում են մեր ժողովրդի արտադրական մշակույթի այդ ահռելի ժառանգությունն ուսումնասիրելու մի շարք հիմնախնդիրներ:

Կատարող խմբի ուշադրության կենտրոնում է նաև մարզի արդի էթնոժողովրդագրության խնդիրը, որը թեմայի իրականացման ուղղությամբ նախատեսված աշխատանքների շարքում առանձին ոլորտ է կազմում: Հաշվետու ժամանակաշրջանում հավաքվել են Շիրակի մարզի քաղաքային և գյուղական բնակավայրերի վերաբերյալ արտադրատնտեսական, ժողովրդագրական, պատմազգագրական, աշխարհագրական և այլ բնույթի համաժամանակյա ու տարաժամանակյա բազմաթիվ նյութեր: ՀԱԱ Շիրակի մարզային մասնաճյուղերի ֆոնդերից դուրս են բերվել 1920-1947թթ. Լենինական քաղաքի ու շրջանի առաջնային արտադրությանը վերաբերող փաստական տվյալներ, ուսումնասիրվել են նաև Լենինականի քաղաքային գործադիր կոմիտեի տեղարդի բաժնի 1923-1958թթ. մշտական գործերը, 1939թ. մարդահամարի տվյալները, գրությունները և այլ փաստական նյութեր: Հիշյալ արխիվային փաստաթղթերի մեջ կարևորվել են 1946-47թթ. և 1961-62թթ. քաղաքում բնակություն հաստատած հայրենադարձների աշխատանքի, մշակութային ադապտացիայի, կենցաղավարման ու այլ հարցերին վերաբերող նյութերի դուրս բերումը: Լենինականի հայրենադարձների ազգագրական ուսումնասիրությունն ավելի ամբողջական կատարելու համար կազմվել է հարցաշար, որի օգնությամբ խումբը նաև բանավոր հարցումներ է անցկացրել Գյումրիում և Անիի տարածաշրջանի մի շարք գյուղերում:

Թեմայի շրջանակներում 2010թ-ին կատարող խմբի մասնակցել է 3 միջազգային և հանրապետական գիտաժողովների, հրատարակել 3, հանձնել տպագրման 5 հոդվածներ:

4. ___

5. 2010թ. հրապարակումների ցանկը

Մենագրություններ

1. Հարությունյան Հ. Հ., Երաժշտությունը V-XVդդ. հայ մատենագրության մեջ/ ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010, 219 էջ
2. Եգանյան Լ.Գ., Շիրակի անտիկ դամբարանադաշտերը / ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010, 224 էջ
3. Սահակյան Կ. Ա., Հազար երազի հուշարձան/ ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010, 230 էջ :
4. ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 13, Եր., «Գիտություն», 2010, 208 էջ :
5. Շիրակի հնագիտական և պատմազգագրական ուսումնասիրություններ, հ.1, Եր., «Գիտություն», 238 էջ :

Հոդվածներ

1. Հայրապետյան Ս.Ա., Գյումրու արդի խոսվածքը/«Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» միջազգային 8-րդ գիտաժողովի նյութեր (22-24 հոկտեմբեր 2010, Գյումրի).- Եր., «Գիտություն» հրատ., 2010, էջ 58-65:
2. Պետրոսյան Ս.Գ., Հայկական լեռնաշխարհի տեղը Էնլիլ և Էնկի աստվածների պաշտանմունքում/ «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» միջազգային 8-րդ գիտաժողովի նյութեր (22-24 հոկտեմբեր 2010, Գյումրի).- Եր., «Գիտություն» հրատ., 2010, էջ 58-65:
3. Պետրոսյան Ս.Գ., Պետրոսյան Լ.Ս., Կարմիր բլուրյան ^{D}AMAR.UTU և Կուեռա-Կուառ աստվածությունների առնչության մասին/«Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» միջազգային 8-րդ գիտաժողովի նյութեր (22-24 հոկտեմբեր 2010, Գյումրի).- Եր., «Գիտություն» հրատ., 2010, էջ 65-71:
4. Եգանյան Լ.Գ., Մեծ Սեպասարի շարժական օջախների հենակները և պատվանդաններ/ ՇՊՄԺ միջազգային 8-րդ գիտաժողովի նյութեր, Եր., 2010, էջ 134-143 :
5. Yeganyan L., Du foyer domestique a la naissance du monde: Un pot a sel du XIIIe siecie decouvert d Ani/ Revue des Etudes Armeniennes, t.2, Paris, 2010, p. 215-228.
6. Հարությունյան Հ. Հ., Աշուղ Իգիթի երաժշտամտածողության բնորոշիչները Հ.Ափինյանի ուսումնասիրության մեջ/ «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը»

միջազգային 8-րդ գիտաժողովի նյութեր (22-24 հոկտեմբեր 2010, Գյումրի).- Եր., «Գիտություն» հրատ., 2010, էջ 215-218:

7. Հարությունյան Հ.Հ., Վարոսյան Ե.Ռ., Ալեքսանդրապոլյան մուղամների մշակումները Ն.Տիգրանյանի կամերային ստեղծագործություններում/ «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» միջազգային 8-րդ գիտաժողովի նյութեր (22-24 հոկտեմբեր 2010, Գյումրի).- Եր., «Գիտություն» հրատ., 2010, էջ 202-207:

8.Սահակյան Կ.Ա., Հովհաննիսյան Ռ.Պ., Սուրբ Սարգիսը ժողովրդական պատկերացումներում/«Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» միջազգային 8-րդ գիտաժողովի նյութեր (22-24 հոկտեմբեր 2010, Գյումրի).- Եր., «Գիտություն» հրատ., 2010, էջ 169-172:

10. Հայրապետյան Ա.Ս., Ալեքսանդրապոլի գավառը Արևելյան Հայաստանի XXդ. Առաջին քառորդի վարչատարածքային բաժանումների համակարգում/ «Հայոց պատմության հարցեր», Գիտական հոդվածների ժողովածու, հ. 11, Եր., 2010, էջ 197-209:

11. Հայրապետյան Ա.Ս., Ռուս վերաբնակները Ալեքսանդրապոլի գավառում, /«Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» միջազգային 8-րդ գիտաժողովի նյութեր (22-24 հոկտեմբեր 2010, Գյումրի).- Եր., «Գիտություն» հրատ., 2010,էջ 86-97:

12. Պետրոսյան Լ. Ս., Օրոնտես-Երվանդի հակամակեդոնական գործունեության արտացոլումը Մովսես Խորենացու երկերում/«Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» միջազգային 8-րդ գիտաժողովի նյութեր (22-24 հոկտեմբեր 2010, Գյումրի).- Եր., «Գիտություն» հրատ., 2010, էջ 71-78:

13.Այվազյան Գ.Ս., Ալեքսանդրապոլի բարեգործական-մշակութային ընկերությունները 1860-1870-ական թվականներին/ «Հայոց պատմության հարցեր», Գիտական հոդվածների ժողովածու, հ. 11, Եր., 2010, էջ 124-129:

14.Այվազյան Գ.Ս., Ալեքսանդրապոլի կրթական- հասարակական կյանքը «Արարատ» ամսագրում (1860-1880-ական թթ.) /«Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» միջազգային 8-րդ գիտաժողովի նյութեր (22-24 հոկտեմբեր 2010, Գյումրի).- Եր., «Գիտություն» հրատ., 2010, էջ 111- 119:

15.Ակոպով Ա.Ա., Տայքի և Անիի Բագրատունիների փոխհարաբերությունները Xդ. Երկրորդ կեսին/«Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» միջազգային 8-րդ գիտաժողովի նյութեր (22-24 հոկտեմբեր 2010, Գյումրի).- Եր., «Գիտություն» հրատ., 2010, էջ 78-86:

16. Ակոպով Ա.Ա., Ժողովրդագրական գործընթացները պատմական Տայքի տարածքում (XVI-XVIIIդդ.) /ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 12, 2010, էջ 99-110 :
17. Ալեքսանյան Կ., Պետրոս Մոճոռյանի հուշերը Գոլիցինին տեռորի ենթարկելու վերաբերյալ / Բանբեր Հայաստանի արխիվների, թիվ 1, Երևան, 2010, էջ 121-128:
18. Ալեքսայնան Կ., Ժամանակավոր իշխանության մարմինների գործունեությունն Ալեքսանդրապոլում 1921թ. փետրվար-ապրիլ ամիսներին /«Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» միջազգային 8-րդ գիտաժողովի նյութեր (22-24 հոկտեմբեր 2010, Գյումրի).- Եր., «Գիտություն» հրատ., 2010, էջ 97-104:
19. Աթանեսյան Լ. Գեղանկարիչ Վազգեն Ստեփանյան, /«Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» միջազգային 8-րդ գիտաժողովի նյութեր (22-24 հոկտեմբեր 2010, Գյումրի).- Եր., «Գիտություն» հրատ., 2010, էջ 279-282:
20. Բազեյան Կ.Ռ., Ժողովրդական բժշկության ավանդական եղանակները Շիրակում 19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին /«Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» միջազգային 8-րդ գիտաժողովի նյութեր (22-24 հոկտեմբեր 2010, Գյումրի).- Եր., «Գիտություն» հրատ., 2010, էջ 147-153:
21. Բազեյան Կ.Ռ., Գործվածքն ու դրա հետ կապված արհեստները հայոց մեջ (XIX-XXդդ.) / Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում (Հայ ժողովրդական մշակույթը XV), Երևան 2010, էջ 404-413:
22. Բոյաջյան Ա.Գ., Սարգսյանի Հ., Հայրենադարձությունն Արթիկի շրջանում 1946-1947թթ. (ըստ ՀՀ ԱԱ Արթիկի տարածքային ներկայացուցչության նյութերի) / «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» միջազգային 8-րդ գիտաժողովի նյութեր (22-24 հոկտեմբեր 2010, Գյումրի).- Եր., «Գիտություն» հրատ., 2010, էջ 153-159:

Հանձնված է հրատարակման

1. Պետրոսյան Ս.Գ., Արարատյան լեռների հին անունների և անվանադիրների մասին/ «Պատմա-բանասիրական հանդես», թիվ 3, Եր., 2010:
2. Պետրոսյան Ս.Գ., Քոչարի պարի ծիսական հենքը/ «Արվեստ և ժամանակ», Գյումրի, 2010:
3. Պետրոսյան Ս.Գ., Մովսես Խորենացին Հայաստանում սեպագրության հայտնվելու ժամանակի մասին/ ՎՊՄԻ գիտաժողովի նյութեր նվիրված Մ.Խորենացու 1600-ամյակին (25-26 նոյեմբերի 2010)
4. Եգանյան Լ.Գ., Մեծ Սեպասարի օջախները / Հին հայ մշակույթ, XV, Եր., 2010,

5. Հ.Հարությունյան, Որոշ դիտարկումներ հայոց ուշմիջնադարյան երաժշտության պատմության խնդիրների մասին: «Մշակույթների երկխոսություն. Հայաստանը եւ համաշխարհային մշակույթը», Գյումրի, 2010:
6. Հայրապետյան Ա., Արևմտահայ գաղթականության տեղաբաշխումը Փամբակի գավառում 1829-1831թթ., ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 13, Գյումրի, 2010, 10 էջ:
7. Սահակյան Կ. Ա., Ժամանակի հոգեբանական ընկալումը ստրեսներից հետո / «Հոգեբանության դասավանդման որակի ապահովման և հոգեբանական ծառայության հիմնախնդիրները» գիտաժողովի նյութեր (7-9 նոյեմբերի 2010), Գորիսի մանկավարժական համալսարան, 6 էջ :
8. Սահակյան Կ.Ա., Մշակույթների երկխոսություն անձի և ազգի մակարդակում «Մշակույթների երկխոսություն. Հայաստանը եւ համաշխարհային մշակույթը», Գյումրի, 2010, 7 էջ:
9. Саакыан К.А., Галоыан К., Формирование нового духовно-информационного поколения, ԳՊՄԻ գիտաժողովի նյութեր (13-15 դեկտեմբերի 2010)
10. Հայրապետյան Ա., Ալեքսանդրապոլի գավառը XIXդ. Արևմտյան Հայաստանի ժողովրդագրական գործընթացների համատեքստում, «Հայոց պատմության հարցեր», Գիտական հոդվածների ժողովածու, հ. 12, Եր., 2011, 9 էջ:
11. Հայրապետյան Ա.Ս., Ալեքսանդրապոլի գավառի պատմությունը թվերով, Եր. «Գիտություն» հրատ., 2010, 280 էջ
12. Ալեքսանյան Կ., Փաստաթղթեր Ալեքսանդրապոլում թուրքական բռնազավթման շրջանում ստեղծված ժամանակավոր իշխանության մարմինների գործունեության վերաբերյալ, Բանբեր Հայաստանի արխիվների, թիվ 2, Երևան, 2010, 20 էջ:
13. Ալեքսանյան Կ., Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի (Ամերկոմ) գործունեությունը Ալեքսանդրապոլի գավառում 1919-1921թթ., «Համաշխարհային մշակույթը և Հայաստանը», Միջազգային III գիտաժողով, Գյումրի, 2010, 5 էջ:
14. Ալեքսանյան Կ., Ալեքսանդրապոլի գավառի գրավման գիտական և հրապարակախոսական քննարկումները, «Հայ հասարակական-քաղաքական միտքը 20-րդ դարավերջին-21-րդ դարասկզբին» գիտաժողով, Երևան, 2010, 6 էջ :
15. Ալեքսանյան Կ., Ալեքսանդրապոլի գավառը թուրքական բռնակալման շրջանում (1918թ. մայիս-դեկտեմբեր), ԳՊՄԻ հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 2010, 5 էջ:

16. Այվազյան Գ., 1860-1880-ական թվականների Ալեքսանդրապոլը «Մեղու Հայաստանի»-ի էջերում/ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 13, Գյումրի, 2010, 7 էջ:
17. Բազեյան Կ. Ռ., Вышивка и кружево в армянском народном костюме/ Международный симпозиум, Интеграция археологических и этнографических исследований, Казань 2010:
18. Բազեյան Կ. Ռ., Վասպուրականի ասեղնագործության առանձնահատկությունները, Վանի 2865-ամյակին նվիրված գիտաժողով, Երևան 2010:
19. Բազեյան Կ. Ռ., Շիրակի գեղարվեստական գործվածքը, ՇՀՀԿ Գիտական աշխատություններ, XIV:
20. Բազեյան Կ. Ռ., Կանանց ձեռարվեստը (9 էջ), Զուլիակությունը հայոց մեջ (11 էջ), “Հայերը” ազգագրական ուսումնասիրություն, Մոսկվա:
21. Աղանյան Գ., Ոսկերչություն և արծաթագործություն (5 էջ), Զինագործություն (9 էջ), “Հայերը” ազգագրական ուսումնասիրություն, Մոսկվա:

6. Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն ՊՈԱԿ,

տնօրեն՝ բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Սերգո Արտուշի Հայրապետյան,

գիտքարտուղար՝ արվեստագիտության թեկնածու Հարությունյան Հասմիկ Հայկի

հեռ. (0312) 6 94 77

էլ. հասցեն. hkentron@mail.ru

7. Տվյալներ կադրերի վերաբերյալ

ա) ___

բ) ___

գ) 19

8. 2 .

9. ___

10. ___

11. ___

ՇՀՀ կենտրոնի տնօրեն՝ Ս. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Գիտքարտուղար՝ Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

__Աղյուսակ 1

Աղյուսակ 2

2010թ. ՀՀ ԳԱԱ թեմատիկայի ամփոփ տվյալներ

N	Կազմակերպությունը	Թեմաների կամ պայմանագրերի թիվը (n) և ֆինանսավորման ծավալը (X հազ.դր.)		
		Բազային	Թեմատիկ	Տնտ. պայմանագրեր
1	2	3	4	5
1	Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն ՊՈԱԿ	1 15.085.700դր.	3 4.812.000դր.	

Աղյուսակ 3

Կազմակերպության անցկացրած հանրապետական և միջազգային միջոցառումները

N	Միջոցառումներ	Անցկացման վայրն ու ժամանակը, կազմակերպիչները	Մասնակիցների թիվը	
			ընդամենը	Այդ թվում արտ. Երկրից
1	2	3	4	5
1	«Մ.Խորենացի-1600» գիտական ընթերցումներ	ՇՀՀ կենտրոն, ԳՊՄԻ, ԳԱԱ պատմության ինստիտուտ	7	-
2	Գիտական սեմինար «Անիի եկեղեցիները. Բագնայրի վանքը հազար տարեկան է» թեմայով:	Գյումրի, մայիսի 18, ՇՀՀ կենտրոն, Շիրակի հոգևոր թեմի առաջնորդարան, Մատենադարան	5	-
3	«Քարանձավային Անին» գիտարշավ-գիտաժողով Հայկաձոր՝ նվիրված Անիի 1050 ամյակին	Հայկաձոր, սեպտեմբերի 19 ՇՀՀ կենտրոն, Շիրակի երկրագիտական թանգարան	21	2
4	«Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» միջազգային 8-րդ գիտաժողով	Գյումրի, հոկտեմբերի 22-24, ՇՀՀ կենտրոն	65	15

----Աղյուսակ 4

Աղյուսակ 5

Արտասահմանյան գիտնականների ընդունելություն ԳԱԱ Կազմակերպություններում

N	Կազմակերպությունը	Երկիրը	Ընդունված գիտնականների քանակը		
			Գիտաժողովներին մասնակցելու	Համատեղ գիտական աշխատանք կատարելու	Բանակցությունների և խորհրդաժողովների համար
1	2	3	4	5	6
1	ՇՀՀ կենտրոն	Գերմանիա, Ճապոնիա, Ֆրանսիա, ԱՄՆ Իտալիա Վրաստան	1 2 1 1 2 1	2 1 1 1	5

___Աղյուսակ 6

Աղյուսակ 7

Կազմակերպության 2010թ. Ֆինանսավորման ծավալները

N	Կազմակերպությունը	Բյուջե	Արտաբյուջե	Դրամաշնորհներ		
				արտառժույթ ($,€, руб.)	Արժույթի կուրսը	Դրամ
1	2	3	4	5	6	7
	ՇՀՀ կենտրոն	22.264.200				

Աղյուսակ 8

ԳԱԱ գիտաշխատողների 2010թ. հրապարակումների ընդհանուր քանակը

N	Կազմակերպությունը	Մենագրություն, ժողովածու		Ուսումնական ձեռնարկ, դասագիրք		Հոդվածներ, զեկուցումներ		Թեզիսներ	
		Հանրապետ.	Արտասահմ.	Հանրապետ.	Արտասահմ.	Հանրապետ.	Արտասահմ.	Հանրապետ.	Արտասահմ.
1	2	3	4		5			6	7
	ՇՀՀ կենտրոն	5				37	3	2	1

Աղյուսակ 9

Ասպիրանտների թվաքանակը

Կազմակերպությունը	Ասպիրանտների քանակը (այդ թվում կանայք) առ 01.01.2010թ.		Հաշվետու տարում ասպիրանտուրա են ընդունվել (այդ թվում կանայք)	
	ա/կ.	ա/չկ.	ա/կ.	ա/չկ.
1	2	3	4	5
ՇՀՀ կենտրոն		1		

___Աղյուսակ 10

Աղյուսակ 11

Աշխատողների թվաքանակի ամփոփ տվյալներն առ 01.01.2011թ.

N	Կազմակերպությունը	Աշխատող ների ընդհանուր թիվը	Գիտական աշխատողների ընդհանուր թիվը	ԳԱԱ ակադեմի կոսներ	ՀՀ ԳԱԱ թղթակից անդամներ	Գիտության դոկտորներ	Գիտության թեկնածուներ
1	2	3	4	5	6	7	
	ՇՀՀ կենտրոն	22	17			2	10

ՇՀՀ կենտրոնի տնօրեն՝

բ.գ.դ., պրոֆեսոր **Ս. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**